ՀՀ ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՊԱԼԱՏԻ ԽՈՐՀՈՒՐԴԸ ԴԻՄԵԼՈՒ Է ՀՀ ՆԱԽԱԳԱՀԻՆ, ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆԻՆ ԵՎ ՊԱՏԳԱՄԱՎՈՐՆԵՐԻՆ՝ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ ԴԻՄՈՒՄ ՆԵՐԿԱՅԱՑՆԵԼՈՒ ՀԱՄԱՐ

14.06.2024 15:08

2024 թվականի հունիսի 14-ին տեղի է ունեցել Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի (այսուհետ՝ Պալատ) խորհրդի նիստ:

Հաշվի առնելով «Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագծի (այսուհետ՝ Նախագիծ) ընդունման փաստը, Պալատի խորհուրդը ևս մեկ անգամ ընդգծել է, որ Նախագիծն իր խնդրահարույց դրույթներով առաջին իսկ օրերից անընդունելի էր փաստաբանական համայնքի համար:

Այդ առնչությամբ, ՀՀ փաստաբանների պալատը գրավոր դիտողություններ էր ներկայացրել ՀՀ վարչապետի աշխատակազմ, ՀՀ ֆինանսների նախարարություն, ՀՀ արդարադատության նախարարություն, ՀՀ մարդու իրավունքների պաշտպանին:

Ի դեպ, Նախագիծը խնդրահարույց էին համարել և դիտողություններ ներկայացրել ինչպես Մարդու իրավունքների պաշտպանը (մարդու իրավունքների վրա հնարավոր բացասական ազդեցության և ռիսկերը չգնահատելու մասով), այնպես էլ ՀՀ արդարադատության նախարարությունը (նոտարական ծառայությունների իրականացման մասով՝ նույն հարկային քաղաքականության որդեգրման տեսանկյունից):

Ավելին, ՀՀ փաստաբանների պալատը նախաձեռնել և հանդիպում-քննարկումներ է ունեցել Ազգային ժողովի պետահիրավական և տնտեսական հարցերի մշտական հանձնաժողովների մասնակից պատգամավորների հետ, որի նիստերին մասնակցել է նաև Նախագծի հեղինակ ֆինանսների նախարարության ներկայացուցիչը, ուր հանգամանորեն ներկայացվել են Նախագծի վիճահարույց ասպեկտները:

Նախագծի ընդունման դեպքում բացասական հետևանքների մասին ՀՀ փաստաբանների պալատը բազմիցս բարձրաձայնել է տարբեր լրատվականներով, իրականացրել նաև մամուլի ասուլիսներ:

Հիշեցնենք, որ Օրենքի կենսագործման արդյունքում առնվազն.

- Շեշտակի բարձրանալու է փաստաբանական ծառայությունների ինքնարժեքը, հետևաբար և գները՝ սահմանափակելով իրավաբանական օգնության հասանելիության մատչելիությունը.

- Հանրային պաշտպանի գրասենյակի տիրույթից դուրս բացառվելու է անվճար իրավաբանական օգնության տրամադրման (pro bono) հնարավորությունը, քանի որ այն նույնպես ենթակա է լինելու հարկման.

- Էականորեն նվազելու է քաղաքացիների իրավաբանական օգնություն ստանալու մատչելիությունը և դատական պաշտպանության իրավունքի իրացման հնարավորությունը.

- Անհամեմատ ավելանալու է Հանրային պաշտպանի գրասենյակ դիմողների քանակը, ինչը ծանրաբեռնելու է առանց այն էլ գերծանրաբեռնված հանրային պաշտպանների աշխատանքը՝ հանգեցնելով մատուցվող ծառայության որակի անկման:

Ի թիվս բազմիցս մատնանշված վիճահարույց դրույթների, անշուշտ, առկա է նաև ՀՀ Ահամանադրությանը համապատասխանության հարց, քանի որ խոսքը առաջին հերթին վերաբերում է յուրաքանչյուրի՝ միջազգային պայմանագրերով և ՀՀ Սահմանադրությամբ երաշխավորված որակյալ իրավաբանական օգնություն ստանալու իրավունքի ոտնահարմանը, օրենքի առջև բոլորի հավասարության սկզբունքի խաթարմանը, տարբերվող և խտրական վերաբերմունքի դրսևորմանը, հիմնական իրավունքների և ազատությունների սահմանափակման համար ընտրված միջոցների պիտանիության և անհրաժեշտության բացակայությանը:

Այս առումով, Պալատի խորհուրդը հանգամանորեն ներկայացրել է հիմնավորումներ, որոնք ներկայացված են հաղորդագրությանը կից:

Ամփոփելով փաստերը և հիմք ընդունելով «Փաստաբանության մասին» օրենքի 7-րդ հոդվածի, ՀՀ փաստաբանների պալատի կանոնադրության 2.2. կետի պահանջները,

ՀՀ փաստաբանների պալատի խորհուրդը որոշել է.

Դիմել ՀՀ Նախագահին, ՀՀ Մարդու իրավունքների պաշտպանին, Ազգային Ժողովի պատգամավորներին՝

«Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» օրենքի Սահմանադրությանը համապատասխանությունը որոշելու նպատակով Սահմանադրական դատարան դիմում ներկայացնելու համար:

ԲԵՌՆԵԼ ՀՀ ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՊԱԼԱՏԻ ԽՈՐՀՐԴԻ ՈՐՈՇՈՒՄԸ

Վերադառնալ $(window).load(function(){ if(typeof $(".fb_comments_count").html() != "undefined" && parseInt($(".fb_comments_count").html()) != 0){ updateCommentsCount(window.location.href); } })